Էսաց.—Բարիւ քի, քեռու տղայ։

Մհեր զարմացաւ, էսաց.—Ի՞նչ կ'ասիս քեռա-կնիկ[1])։

Էսաց.—Խոգուդ կուրբան իմ, էս էրկու օր կայ, թոնիր չըմ վառի, կեացիր էր սար բանջրի, մկայ քեաղցացիր իմ, էսաց, մէ կտուր խաց տու, տանիմ, ուտիմ։

Էսաց.—Վա՛յ տու բարով էկար, քեռա-կնիկ, տիւ բարով էկար, ա՛ռ քի բաղնիս[2]), կինա՛ տիւռ բաց, խաց թխուկ ի, միս խփուկ ի, քեանի մ' կէրիս՝ կի՛, դարձի՛, էրի՛։

Բաղնիս առից, կինաց. տիւռ էբաց, նստաւ էնտեղ. առից խաց ուտիլ. մէկ դոր ըմ յիւշացաւ[3])։

Մհեր էսաց.—Ջանըմ, էսաց, ըլնիմ, էրթամ քիտիւ, մէ աւիլ բան չ'էնը։

Էլաւ, կինաց, տեսաւ էդա տաս ջիւալ ալրը խաց բիրադի կիրիր, էդա տաս կանթէն պղընձը մա բիրադի կիրիր ը, նստիր ը։

Էկաւ, էսաց.—Քեռա-կնիկ, խացիր ո՞ր տեղն ի։

Էսաց.—Մեռնի՛մ քի, մէկ փուռ խաց կէր էստեղ, էրկու օր կէր՝ սար քեաղցած էր, էկի էստեղ, բիրադը կերայ, հալա չ'կըշտացայ էլ, էսաց։

Էսաց.—Վա՛յ, էսաց, մարդակիր պառաւ ինչ կ'ասին, էս ի։

Ըռըկաւ Մհեր. մէկ ճլըխտրիկ[4]) էզար. ճըլըխտրիկ ինչ էզար, գլեռա տեղէն թռաւ։

Էլաւ, նստաւ, շատ կասափաթ[5]) էրաւ, էսաց.—Ախպիրքիրս անօթի մնացին։

Մնաց յիրիկուան. ախպէրքիր էկան. էկան էնդեղ, իրանց քիւրոջ գլեռա տեսան. իրանց քիւրոջ բան գիտըն, ամա Մհեր չէր գիտը, միամիտ էր։

Ասին.—Մհեր, տիւռ բաց, էրթանք, խաց ուտինք։

---

[1]) Քեռակին։ [2]) Բաղանիք։ [3]) Ուշացաւ։ [4]) Ապտակ։ [5]) Միտք, հոգս։